

գիւրեանց զապս եկեկ եւ յեկեղեցիքն թո՛ղ ան-
արգել եւ անասն մեամեան եւ եղանեան, ոչ ոք հա-
կառակ եւ ման չլինի:»

Եւ այս կերպով արձանագրութիւն կը
ձգուի և դատը կը վերջանայ:

Արձանագրութեան պատճէնը Դարա-
նաղցի կը ստանայ քանի մը օր յետոյ (Դա-
րանաղցի, էջ 134-135):

1608ին կատարուած այս դիմումին,
ինչպէս կը տեսնուի, կը գործակցի Դրի-
գոր Կեսարացին, որ սակայն քիչ յետոյ
դարձեալ աշխարհական վէթիլներու կողմը
կ'անցնի և կը սկսի հալածել նորեկ քա-
հանաները, այնպէս որ ոմանք իր ձեռքէն
ազատելու համար իսլամանալ կը փորձուին
(Դարանաղցի, էջ 135-137):

Դարանաղցին գրաւոր դիմում կ'ընէ,
սակայն Կեսարացին պատասխան անգամ
չի տար: Ընդհակառակն զայն դատաստանի
կը քաշէ Տէֆտէրտարին առջև: Դարանաղ-
ցին կ'ուզէ զայն մեղմացնել. Կեսարացին
աւելի կը գոռոզանայ և կը նախատէ զինքը,
և վերջապէս կը մտնեն դատարան, ուր Դա-
րանաղցին կը բացատրէ Կեսարացիին և իր
մարդոց գործադրած կեղեքումները:

Սակայն Դրիգոր Կեսարացիի կուսա-
կիցները կը շահին Տէֆտէրտարին սիրտը
(Դարանաղցի, էջ 139-140) որ գործը կը յղէ